

ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԻՍՏԻ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 6

26.11.2013թ.
Նախագահ՝

Կ.Բ. Այվազյան

ք. Իջևան

Քարտուղար՝

Ա.Ս.Հակոբյան

Ներկա էին խորհուրդի նախագահ Կ.Բ. Այվազյանը (նիստի նախագահողը), խորհրդի քարտուղար Ա. Հակոբյանը, «Դեկորատիվ – կիրառական արվեստի» ամբիոնի վարիչ Ռ. Բուդդարյանը, ասիստենտներ Ս.Հովհաննիսյանը, Ա.Չիբուխյանը, Դ. Չիբուխյանը, Լ.Լաչիկյանը, ֆակուլտետի ՈւԽ նախագահ Հ.Գ.Ոսկանյանը և ՈւԳԸ նախագահ Շ.Կ.Բաղդասարյանը: Նիստին հրավիրված էր նաև մասնաճյուղի տնօրենի օգնական Ս.Աթոյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1.Առաջին կիսամյակի երկրորդ ընթացիկ ստուգումների և քննությունների ժամանակացույցի հաստատում:

/գեկ. Կ.Բ.Այվազյան/

2. 2013-14 ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցի հաստատում:

/գեկ. Կ.Բ.Այվազյան/

ԼՍԵՑԻՆ – Ֆակուլտետի խորհրդի նախագահի զեկույցն օրակարգի առաջին հարցի վերաբերյալ: Նա տեղեկացրեց, որ խորհրդի որոշ անդամներ դիմել են տնօրենին ս/թ. նոյեմբերի 26-ին աշխատանքի չներկայանալու խնդրանքով; Այդ իսկ պատճառով ունենք նիստին չմասնակցողներ: Նա նշեց, որ ըստ ժամանակացույցի սահմանված ժամկետների կազմվել են և՛ բակալավրիատի և՛ մագիստրատուրային երկրորդ ընթացիկ ստուգումների և քննությունների ժամանակացույցերը: Նա նշեց, որ բակալավրիատի առաջին կուրսում ըստ ուսումնական պլանի նախատեսված է երեքական առարկաներից ընթացիկ ստուգում և ընթացիկ քննություն: Ստուգումների և քննությունների օրերը նշանակելիս ելակետ է ընդունվել մասնագիտական ուսումնական ծրագրերից նախատեսված մուտքերի իրականացումը: Իրազեկվեց, որ 2013թ.

դեկտեմբերի 16-ից 22-ի շաբաթը կիսամյակի 16-րդ շաբաթն է: Ընթացիկները նշանակվել է 16-րդ շաբաթում՝ մուտքերն ամբողջությամբ իրականացնելուց հետո: Երկրորդ կուրսում նախատեսված չէ ընթացիկ ստուգում, նախատեսված է երեք առարկայից ընթացիկ քննություն: Բակլավրիատի չորրորդ կուրսում մեկ առարկայից նախատեսված է ընթացիկ ստուգում, հինգ առարկայից՝ ընթացիկ քննություն: Երկրորդ և չորրորդ կուրսերի երկրորդ ընթացիկ քննությունների օրերը նշանակելիս ելակետային են ընդունվել այն նույն սկզբունքները՝ ինչն որ առաջին կուրսի համար:

Նիստի մասնակիցներին տեղեկացվեց նաև, որ ներկայացվող ժամանակացույցերը քննարկվել են կուրսերի և խմբերի ավագների հետ՝ դեկանի և ավագների ամեն շաբաթյա հանդիպումների ձևաչափով:

Նմանատիպ գործառույթ է ներկայացվել նաև մագիստրատուրայի առաջին և երկրորդ կուրսերի երկրորդ ընթացիկ քննությունների ժամանակացույցերը կազմելիս: Նշվեց, որ մագիստրատուրայում ընթացիկ ստուգում չկա: Նախատեսված է յուրաքանչյուր կուրսում հնգական առարկայից ընթացիկ քննություն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - <<Դեկորատիվ – կիրառական արվեստի>> ամբիոնի վարիչ Ռ.Բուղդարյանը նշեց, քանի որ ժամանակացույցերը կազմվել են ըստ ուսումնական գործընթացի սահմանված ժամկետների, քննարկվել են ուսանողների հետ, համապատասխանեցվել առարկայական ծրագրերի իրականացման համար մատյանների գրանցումների հետ՝ ուստի առաջարկում եմ հաստատել և ներկայացնել մասնաճյուղի ուսումնամեթոդական վարչության քննարկմանն ու հաստատմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ – Հանձնարարել ֆակուլտետի դեկանին և քարտուղարին նշված ժամանակացույցերը, սահմանված կարգով, ներկայացնել մասնաճյուղի ուսումնամեթոդական վարչության քննարկմանն ու հաստատմանը:

Հաստատված ժամանակացույցերը փակցնել հայտարարությունների տախտակի վրա՝ ուսանողներին և դասախոսներին իրազեկելու նպատակով:

ԼՍԵՑԻՆ – Օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ նիստը նախագահողի զեկուցումը: Նա նշեց, որ բակլավրիատի ուսումնական պարապմունքներն ավարտվում են 2013թ. դեկտեմբերի 21-ին, իսկ մագիստրատուրայում՝ 2013թ. դեկտեմբերի 28-ին: Հետևաբար բակլավրիատի ստուգարքները նշանակված են 2013թ. դեկտեմբերի 21-ից, իսկ մագիստրատուրայում՝ դեկտեմբերի 28-ից:

2013-14ուստարվա առաջին կիսամյակի քննությունները նշանակված են 2014թ.հունվարի 8-ից 22-ը:

Կապված դասախոսների Երևանից բերելու չվերթերի հետ, ֆակուլտետ հրավիրվող դասախոսների համար նախատեսվել են հետևյալ աշխատանքային օրերը.

Հունվար 2014թ. 9,10,11 – Իսախանյան Համլետ,Լաչիկյան Լևոն

13.14.15 – Ստեփանյան Մհեր

16.17.18 – Ջավրուշյան Գևորգ

20,21,22 - Լաչիկյան Լևոն

Նշվեց, որ Լ.Լաչիկյանը քննությունն է անցկացնելու չորրորդ կուրսում երկու առարկայից, ուստի նա հրավիրվում է երկու տարբեր չվերթերով:

Ներկաներին տեղեկացվեց, որ քննությունները նշանակվել են 2014թ.հունվարի 8-ից մինչև հունվարի 23-ը: Տեղեկացվեց նաև , որ ֆակուլտետի խորհուրդը նախատեսում է ,որ Երևանից հրավիրվող մասնագետներից մեկը /Մ.Ստեփանյանը/ մասնակցի երեք կուրսերի <<Գծանկարչություն>> առարկայի քննություններին, իսկ մյուս մասնագետը`/Գ.Ջավրուշյանը/ մասնակցի երեք կուրսերի << Գունանկարչություն>> առարկայի քննություններին:

Նիստի մասնակիցներին տեղյակ պահվեց իրենց քննությունների ժամանակացույցը: Նիստը նախագահողը նշեց, որ քննաշրջանի ժամանակացույցը մինչև ֆակուլտետի խորհրդի նիստում հրապարակելը, քննարկվել է կուրսերի ավագների հետ :

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - << Գծանկար,գունանկար>> ամբիոնի ասիստենտ Ս.Հովհաննիսյանը նշեց, որ եթե քննարկվող ժամանակացույցի մասին տեղյակ են և՛ ուսանողները, և՛ դասախոսները, ապա առաջարկում եմ այն ներկայացնել մասնաճյուղի ՈւՄԿ-ի քննարկմանն ու հաստատմանը:

ՈՐՈՇԵՑԻՆ — Հանձնարարել ֆակուլտետի ղեկանին և քարտուղարին նշված ժամանակացույցերը, սահմանված կարգով, ներկայացնել մասնաճյուղի ուսումնամեթոդական վարչության քննարկմանն ու հաստատմանը:

Հաստատված ժամանակացույցերը փակցնել հայտարարությունների տախտակի վրա՝ ուսանողներին և դասախոսներին իրազեկելու նպատակով: